



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

ԵՐԵՎԱՆԻ Վ.ԲՐՅՈՒՄՈՎԻ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍԱԼՍԱՐԱՆԻ
ՌԵԿՏՈՐ ՊԱՐՈՆ Ս. ԶՈՒՅԱՆԻՆ

*ՂԵ - 258
04.03.2010թ.*

Հարգելի պարոն Զոլյան

Ինչպես Ձեզ հայտնի է, 2009թ. հուլիս ամսին Փարիզում տեղի ունեցած Ֆրանկոֆոնիայի խորհրդարանական վեհաժողովի /ՖԽՎ/ 35-րդ նիստի ժամանակ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովին շնորհվեց ՖԽՎ-ում ասոցացված անդամի կարգավիճակ, որը ՀՀ Ազգային ժողովին հնարավորություն է ընձեռում լիովին ներգրավված լինել ՖԽՎ աշխատանքներում:

Այսպես՝ ս.թ. մայիսի 3-7-ը Երևանում տեղի կունենա Ֆրանկոֆոնիայի խորհրդարանական վեհաժողովի Եվրոպայի տարածաշրջանային 23-րդ համաժողովը՝ «Մոցիալ-տնտեսական և մշակութային փոփոխությունների ընթացքում գտնվող մեր հասարակություններում կրթական համակարգերի խնդիրները և մարտահրավերները» ընդհանուր թեմայով, որին, ըստ նախնական հայտերի, կմասնակցեն մոտ 70 ֆրանսախոս պատգամավորներ Եվրոպայի ՖԽՎ անդամ խորհրդարաններից:

Համաժողովի երկու նիստերի ընթացքում կքննարկվեն երեք ենթահարցեր՝

- «Դպրոցի դերը և առաքելությունը, նրա արժեքները և մանկավարժական նպատակները»
- «Դպրոցը և անհավասարությունները /ռազմավարությունների կիրառում մի շարք հարցերում՝ դրական խտրականությունը, իրական արդարությունը և հավասարությունը դպրոցում և այլն/»
- «Դպրոցը և նրա անկախությունը շուկայից»

.... /....

«Վ.Բրյուսովի անվան
Լեզվաբանական
համալսարան» ՊՈԿԿ
ՄՈՒՏՔ № 01-22/88
«05» 03 2010թ.

Վերոհիշյալ հարցերի վերաբերյալ հիմնական զեկուցողները պետք է լինեն ՖԽՎ-ում ՀՀ ԱԺ խմբի /սեկցիայի/ ղեկավար Արմեն Ռուստամյանը, անդամներ Ստյոպա Սաֆարյանը, Նաիրա Չոհրաբյանը կամ Արա Բաբլոյանը՝ որպես հյուրընկալող երկրի խորհրդարանի ներկայացուցիչներ, ինչպես նաև նաև չորս փորձագետներ Հայաստանից:

Այս կապակցությամբ, ակնկալում ենք Ձեր մասնակցությունը Եվրոպայի տարածաշրջանային 23-րդ համաժողովի աշխատանքներին, ինչպես նաև ուրախ կլինենք համալսարանի երկու դասախոսների առաջարկել որպես հիմնական զեկուցող:

Նիստերն ընթանալու են ՀՀ ԱԺ նիստերի դահլիճում, ֆրանսերեն լեզվով: Մամուլի և հրավիրյալների համար Ազգային ժողովը կապահովի հայերեն թարգմանություն:

Համաձայնության դեպքում խնդրում են թեկնածուներին ներկայացնել մինչև ս.թ. մարտի 15-ը:

Կից՝ Ձեզ են ներկայացնում համաժողովի ծրագրի նախագիծը:

Կանխավ շնորհակալությամբ և հարգանքներով՝



ԳԵՂԱՄ ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ